ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. օգոստոսի 29

N 335-Կ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) 14.11.2019թ. «Տարածքային կառավարման մասին» օրենքի II գլխի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, 19-րդ հոդվածը և ՀՀ վարչապետի 2023 թվականի օգոստոսի 7-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» № 817-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստի № 1 արձանագրությունը՝

Որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ ՀՀ Արագածոտնի մարզում անտառային և խոտածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:
2. Հաստատել աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մարզի անտառածածկ և խոտածածկ տարածքներում իրականացնել ուսումնասիրություններ և վեր հանել առկա խնդիրները:
4. Աշխատանքային խմբի անդամներին՝ մեկշաբաթյա պարբերականությամբ, յուրաքանչյուր չորեքշաբթի ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն

ներկայացնել առկա խնդիրները, դրանց լուծման համար առաջարկվող ուղիները և տեղեկատվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ամփոփել ստացված տեղեկատվությունը և ներկայացնել Արագածոտնի մարզպետին և ՀՀ ՆԳՆ ՓԾ համապատասխան ստորաբաժանմանը:
6. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 8/29/2023 11:43:37 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2023թ. օգոստոսի 29-ի թիվ 335-Ա որոշման

ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. **Աշխատանքային խմբի ղեկավար՝**

1) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ՝ Դմիտրի Պետրոսյան:

2. **Աշխատանքային խմբի անդամներ՝**

1) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ՝ Արտակ Շամիրյան
2) ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ՝ Ռոլանդ Օհանյան,
3) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր՝ Գևորգ Ավագյան,
4) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ պետ, փ/ծ կապիտան՝ Արսեն Մելիք-Ստեփանյան,
5) ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ Թելման Թովմասյան,
6) ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ Արմեն Կարապետյան,
7) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի պետ՝ Մելիք Գասպարյան,
8) «Հայանտառ» ՊՈԱԿ Արագածոտնի անտառտնտեսության մասնաճյուղի տնօրեն՝ Հայկ Գալստյան,
9) ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող՝ Հայկ Մանուկյան:

3. **Անտառամերձ բնակավայրերի վարչական ղեկավարներ՝**

1) ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Անտառուտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահան Սարգսյան,
2) ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի՝ Բյուրական բնակավայրի վարչական ղեկավար՝ Սպարտակ Ռուստամյան,
3) ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օրգով բնակավայրի վարչական ղեկավար՝ Արայիկ Մանուկյան,

4) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մարզպետ Գրիգորյան,
5) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Երնջատափ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հրաչյա Սահրադյան,
6) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Թթուջուր բնակավայրի վարչական ղեկավար՝ Զոհրակ Ասլանյան,
7) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ձորագլուխ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հրայր Կարապետյան,
8) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ բնակավայրի վարչական ղեկավար՝ Քաջիկ Զաքարյան:

ՀՀ Արագածոտնի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ